Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1153-02.05.2011-ՄԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՕՐԵՆՔԸ

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274 օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին պարբերությունում՝

ա. «բարձրագույն իրավաբանական կրթություն» բառերը փոխարինել «իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում» բառերով.

բ. «1 տարվա» բառերը փոխարինել «6 ամսվա» բառերով.

գ. «ստաժավորում» բառից հետո լրացնել «, իսկ 3 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժի կամ գիտական աստիճանի առկայության դեպքում՝ առնվազն 3 ամսվա ստաժավորում» բառերը.

2) լրացնել 3-րդ պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Նոտարի թեկնածուների որակավորման ստուգմանը կարող է մասնակցել և նոտարի պաշտոնում նշանակվել նաև իրավաբանի առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ գիտական աստիճանի ունեցող Հայաստանի Հանրապետության գործունակ քաղաքացին՝ անկախ ստաժավորման հանգամանքից: Որակավորման ստուգումը հանձնած նման անձինք նոտարի պաշտոնում նշանակվում են կառավարության կողմից սահմանված կարգով նոտարական գործունեության իրականացման հմտությունների ուսուցմանն ուղղված եռամսյա դասընթացը ավարտելուց հետո:»:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը,գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Ռ.Պետրոսյան	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասի «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ա. բարձրագույն իրավաբանական կրթություն» բառերը փոխարինել «իրավաբանան բակալավրի, իրավաբան դիպլոմավորված մասնագետի կամ իրավաբան մագիստրոսի որակավորում» բառերով:	Ընդունվել է մասնակի.	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետի «ա» պարբերությունը շարադրվել է հետևյալ խմագրությամբ. ««բարձրագույն իրավաբանական կրթություն» բառերը փոխարինել «իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում» բառերով»:
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Դ.Հարությունյան	1. Նախագծի առաջին հոդվածի 1-ին մասի ա) կետով առաջարկվել է «Նոտարիատի մասին» ՀՀ 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածում՝ 1-ին մասի 1-ին պարբերությունում՝ «բարձրագույն իրավաբանական կրթություն» բառերը փոխարինել «իրավաբան մագիստրոսի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում» բառերով: Նախագծի առաջին հոդվածի 1-ին մասի ա) կետը հիմնավորված չէ: Առաջարկի իմաստը նախ այն է, որ բակալավրի աստիճան ունեցող անձինք զրկվեն նոտար նշանակվելու հնարավորությունից: Բացի այդ, առաջարկվող մոտեցման	1. Ընդունվել է մասնակի:	1. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետի «ա» պարբերությունը շարադրվել է հետևյալ խմագրությամբ. ««բարձրագույն իրավաբանական կրթություն» բառերը փոխարինել «իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում» բառերով»:

	դեպքում նոտար կարող է նշանակվել այն անձը, ով թեև չունի բազային իրավաբանական կրթություն, սակայն ունի իրավունքի որևէ ոլորտում (օրինակ, պետության և իրավունքի տեսության, միջազգային իրավունքի կամ քրեական դատավարության իրավունքի) մագիստրոս իրավաբանի կոչում, չունենալով պատշաճ գիտելիքներ, օրինակ, քաղաքացիական իրավունքի ոլորտում: Դա հնարավոր է այն պատճառով, որ իրավաբանական ֆակուլտետի մագիստրատուրայում սովորելու համար պարտադիր չէ, որ անձն ունենա բարձրագույն իրավաբանական կրթություն: Պարտադիր է, սակայն, որ նա ունենա բարձրագույն կրթություն: Տեսականորեն, իսկ ավելի ճիշտ՝ դեռևս տեսականորեն, ստացվում է, որ անձն, ով ունի բարձրագույն կրթություն, օրինակ, տնտեսագիտության կամ քաղաքագիտության ոլորտում, կարող է <իրավաբան մագիստրոսի> կոչում ստանալուց հետո՝ առանց բազային իրավաբանական կրթության առկայության նշանակվել նոտար: Արված առաջարկից նաև հետևում է, որ իրավաբան մագիստրոսի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորման առկայությունը համարվում է նոտար նշանակվելու համար պարտադիր պայման: Պետք է նշել, սակայն, որ մագիստրատուրան ունի ոչ այնքան կիրառական, որքան գիտական ուղղվածություն: Մինչդեռ նոտարի գործունեությունը կոնկրետ կիրառական է: Իրավաբան մագիստրոսի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորման առկայությունը ողջամտորեն		

	կարող է պարտադիր պայման հանդիսանալ, օրինակ, դասախոսական գործունեություն իրականացնելու համար: Մագիստրոսի կոչումը անհրաժեշտ նախապայման է նաև հետագա գիտական գործունեությունը շարունակելու՝ հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու համար:[1] Որոշ երկրներում, ի դեպ, տարբերակվում են 2 տեսակի մագիստրատուրայի ծրագրեր՝ Masters of theory և Masters of profession, և վերջինս՝ “մասնագիտության մագիստրոսը”, համապատասխան ծրագրի շրջանակներում ստանում է կիրառական պատրաստվածություն: Հարկ է նաև նշել, որ առաջարկվող կարգավորումները բարձրացնում են մագիստրոսի կոչումը հաստատող դիպլոմի նյութական արժեքը՝ ստեղծելով բուհական համակարգում կոռուպցիոն ռիսկեր, և գցում են բակալավրի կրթական ծրագրի ոչ միայն նյութական արժեքը: Գտնում ենք, որ իրավաբան մագիստրոսի կոչումը չպետք է հանդիսանա նոտար նշանակվելու համար սահմանափակման հիմք՝ պատճառ դառնալով նաև այլ ոլորտներում նմանատիպ սահմանափակման նախադեպի ձևավորման: Այսպես, եթե նոտարի համար որպես պարտադիր պայման սահմանվի իրավաբան մագիստրոսի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորման առկայությունը, անտրամաբանական չի լինի նաև նմանատիպ պարտադիր պայմանի սահմանումը մի շարք այլ պաշտոններին նշանակվելու համար՝ որպես		2. Նոտար դառնալու համար նախագծով 6-ամսյա ժամկետը պայմանավորված չէ դատավորների թեկնածուների համար սահմանված նույն ժամկետով: Թեպետ, փաստորեն, օրենքի այն դրույթը, որով նոտար դառնալու համար նախատեսում է առնվազն մեկ տարվա նոտարական գործունեության ստաժավորում անցնելու պահանջ անգամ դատավորների թեկնածուների հետ համեմատության մեջ շատ երկար ժամկետ է: Խնդիրը կայանում է նրանում, որ նոտարի մոտ ստաժոր նշանակվելու հարցը կախված է նոտարից: Նոտար դառնալու համար ներկայումս գործող առնվազն մեկ տարվա

	հիմնավորում մատնանշելով նոտար նշանակվելու համար նման պարտադիր պայմանի առկայությունը: Սա էլ իր հերթին պատճառ կդառնա բակալավրի՝ որպես բարձրագույն մասնագիտական կրթություն, արժեզրկման, և այն առնվազն de facto կգնահատվի որպես թերի բարձրագույն կրթություն: Առաջարկվում է Նախագծի 1-ին մասի ա) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Նոտարիատի մասին» ՀՀ 2001 թվականի դեկտեմբերի 4-ի ՀՕ-274 օրենքի 10-րդ հոդվածում՝ 3-րդ մասում «և հիմնավորված» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև նմանատիպ տվյալներ ունեցող թեկնածուների մեջև՝ հավասար պայմանների դեպքում, իրավաբան մագիստրոսի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորման առկայությունը:» բառերով: 2. Նախագծի առաջին հոդվածի 1-ին մասի բ) կետով առաջարկվել է Օրենքի 10-րդ հոդվածում՝ 1-ին մասի 1-ին պարբերությունում՝«1 տարվա» բառերը փոխարինել «6 ամսվա» բառերով: Նախագծի առաջին հոդվածի 1-ին մասի բ) կետով առաջարկված փոփոխության ընդունման անհրաժեշտությունը պատշաճ հիմնավորված չէ: Այն հանգամանքը, որ դատավորների թեկնածուների համար սահմանված է վեցամսյա ժամկետ ամենևին չի նշանակում, որ դատավորների թեկնածուների համար սահմանված ժամկետը ողջամիտ է, իսկ նոտարի թեկնածուների համար սահմանված ժամկետը՝ երկար:	2. Չի ընդունվել:	նոտարական գործունեության ստաժավորում անցնելու պահանջը վերաբերում է նաև որոշակի մասնագիտական փորձ ունեցող անձանց: Այդ առումով որոշակի մասնագիտական փորձ ունեցող անձանց համար առնվազն մեկ տարվա նոտարական գործունեության ստաժավորում անցնելու ժամկետը գտնում ենք երկար, որը պետք է կրճատվի: Բացի այդ, «Նոտարիատի մասին» ՀՀ ներկայիս օրենքը հնարավորություն չի տալիս իրավաբանի երկարամյա մասնագիտական ստաժ կամ գիտական աստիճան ունեցող անձանց, նոտարական գործունեության ստաժավորման բացակայության պայմաններում, մասնակցելու որակավորման քննություններին, ինչն անարդարացիորեն խոչընդոտում է նոտարի պաշտոնում բազմաթիվ որակյալ մասնագետների նշանակվելու հնարավորությանը: Առավել որակյալ և բանիմաց թեկնածուների մասնակցությունը նոտարի որակավորման քննություններին կապահովի նոտարի պաշտոնում նշանակվող անձանց բարձր մասնագիտական պատրաստվածությունը և ունակությունները:

	Նման տրամաբանությամբ կարելի էր նաև վերանայել դատավորների թեկնածուների համար սահմանված ժամկետը և այն դարձնել մեկ տարի՝ հիմք ընդունելով նոտարի թեկնածուների համար գործող կարգավորմամբ սահմանված ժամկետը: Մինչդեռ հիմնավորման մեջ բացակայում են գործող կարգավորմամբ սահմանված մեկ տարվա ստաժավորման պահանջի դրա կիրառման ընթացքում առաջացրած խնդիրների վերլուծությունը, Նախագծով առաջարկված փոփոխության ընդունման անհրաժեշտության պատճառները, այդ փոփոխությունն իրականացնելու խնդիրներն ու նպատակները, ինչպես նաև փոփոխության ընդունման դեպքում սպասվող արդյունքների վերլուծությունը: Առաջարկվում է Նախագծի առաջին հոդվածի 1-ին մասի բ) կետը հանել: Նախագծի առաջին հոդվածի 1-ին մասի գ) կետով առաջարկվել է Օրենքի 10-րդ հոդվածում՝ 1-ին մասի 1-ին պարբերությունում՝ «ստաժավորում» բառից հետո լրացնել «, իսկ 3 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժի կամ գիտական աստիճանի առկայության դեպքում՝ առնվազն 3 ամսվա ստաժավորում» բառերը: Իսկ Նախագծի առաջին հոդվածի 2-րդ մասով առաջարկվել է Օրենքի 10-րդ հոդվածում լրացնել 3-րդ պարբերություն՝ հետեւյալ բովանդակությամբ. «Նոտարի թեկնածուների որակավորման ստուգմանը կարող է մասնակցել եւ նոտարի պաշտոնում նշանակվել նաեւ իրավաբանի առնվազն 5 տարվա մասնագիտական		

	աշխատանքային ստաժ կամ գիտական աստիճան ունեցող Հայաստանի Հանրապետության գործունակ քաղաքացին՝ անկախ ստաժավորման հանգամանքից: Որակավորման ստուգումը հանձնած նման անձինք նոտարի պաշտոնում նշանակվում են կառավարության կողմից սահմանված կարգով նոտարական գործունեության իրականացման հմտությունների ուսուցմանն ուղղված եռամսյա դասընթացը ավարտելուց հետո:»: Նախագծի առաջին հոդվածի 1-ին մասի գ) կետով և առաջին հոդվածի 2-րդ մասով առաջարկվող փոփոխությունների ընդունման անհրաժեշտությունը հիմնավորված չէ: Նախ պետք է նշել, որ անձը կարող է ունենալ, օրինակ, 5 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ քրեակատարողական կամ, օրինակ, օպերատիվ-հետախուզական իրավունքի ոլորտում, կամ գիտական աստիճան, օրինակ, քրեական դատավարության ոլորտում, որն in se հիմք չի հանդիսանում ենթադրելու, որ այդ անձը գրեթե պատրաստ է նոտար լինելու: Բացի այդ, Նախագծով, փաստորեն, առաջարկվել է գիտական աստիճան ունեցող անձանց համար նոտար նշանակվելու երկու տարբեր ռեժիմներ: Առաջարկվում է Նախագծի առաջին հոդվածի 1-ին մասի գ) կետում «3 ամսվա ստաժավորում» բառերը փոխարինել «6 ամսվա ստաժավորում» բառերով: Առաջարկվում է Նախագծի առաջին հոդվածի 2-րդ մասի		

	տեքստից հանել «կամ գիտական աստիճան» բառերը՝ բացառելով նոտարի թեկնածուների նկատմամբ երկակի ստանդարտի կիրառման հնարավորությունը: Առաջարկվում է Նախագծի 2-րդ մասի առաջին նախադասությունում «անկախ ստաժավորման հանգամանքից» բառերը փոխարինել «նոտարական գործունեության առնվազն 3 ամսվա ստաժավորման առկայության պարագայում» բառերով: Առաջարկվում է Նախագծի 2-րդ մասի երկրորդ նախադասությունում «եռամսյա դասընթացը» բառերը փոխարինել «մեկամսյա դասընթացը» բառերով:		